թարք՝ խանէն նեղացած իրենց ոխը կ'ուզեն 'ի քրիստոնէից հանելու. մինչև որ թողուն ելնեն քրիստոնեայք 'ի Ղրիմէ, շատ վիշտ և նեղութիւն կը կրեն Թաթարաց ձեռքէն. կանայք ծակամուտ, արք հրացաններին ուսերուն վրայ, անքուն կ'անցընեն գիշերները. իսկ առաջնորդք քրիստոնէից, իբրև չարեաց մակարդ, ծպտեալ և անծանօթ տունէ տուն կը պահուրտին, որ չգիտնան Թաթարք ուր լինելնին: Այդ վերջին պարագայից ահն այնպէս սաստիկ ահացուցել է մերոց սրտերը, որ շատ տարի անցնելէն վերջը, մինչև ցայսօր ևս, պառաւունք՝ անչուշտ 'ի լրոյ՝ սոսկալով կը պատմեն այն դէպքերը, որ եթէ չթողուին և չելնէին 'ի Ղրիմէ՝ ամէնքը Թաթարաց և այլազգեաց թուրին բերանը պիտի ինկնային:

Վերջապէս այլ ինչ հնարք կամ դարման չգտնելով, կը յօժարին Հայք գաղթել 'ի Ղրիմէ, և իրենց առաջնորդաց միջոցիւ կ'առաջարկեն տէրութեան խնդրական ձևով հետևեալ պայմանները. որոց յօժարելով տէրութիւնն և այլ արտօնութիւնք ևս վրան աւելցընելով, միւս տարին կը շնորհէ իրենց պարգևադիր Ողորմածագոյն բան: Հայք կը խնդրեն Ա) Որ տէրութիւնն յանձն առնու վճարելու իրենց՝ պարտիզից, այգեաց և այլ անշարժ կայից գինը 1. Բ) Նոյնպէս վարուցաններու գինը՝ զոր 'ի դաշտին պիտի թողուն. Գ) Վճարել Թաթար մուզայից իրենց պարտքերը. Դ) Ջիրենք և իրենց

1 Գեղերու վրայ խօսք չկայ, զի արդէն Տէրութիւնը խոստացել է տալ նոցա իբր 80,000, ռուբլի հող Նախիջևանցի Հայոց: Նոյնպէս առանձին յեկատերինեսլաւ գաղթող հայ կաթոլիկաց, որք հրաժարելով այդ հողէն դարձել են 'ի Ղրիմ: